

ԿՈՉ ԱՐՏ ԱՍՈՆՎԱՆԻ

ԵՒ ԱՄՐՈՂՔ ՀԱՅՈՒԹԱՆԱՆ

ԱՐԻԻՆ ԱԶԱՆԳ ԿԻԼԻԿԻԱՅԻՆ ՀԱՄԱՐ



Կիլիկիան, Հայութեան այդ հիւրընկալ երկիրը, արևմտազանգ գերեզմանի մը վերածուած է այսօր, հին ջարդերու ատեն քանդուածի տեսակներուն, և ոճիրի պէս պիտութիւններուն ու նրբութիւններուն գերազանցօրէն վարժուած, նախնիրի ու թալանի անասնային բնազդով մուծած խաւամ խուժանին ձեռքով: Տարուոյ լեռները այսօր փոխանակ սառ ու վճիտ ջուրերու, արիւն կը հոսեն իրենց երակներէն և Կիլիկիան գետերը՝ փոխանակ նաւակներու, յօշոտուած դիակներ կը փոխադրեն դէպի Միջերկրական: Ատանա իր բոլոր շրջակայքով այլևս գոյութիւն չունի: Երէկի անոր կենանքէն, գոյութենէն, շարժուն եռուզեռնէն այսօր հազիւ արիւնի, մոխրի համալցնապատկերը կայ մէջտեղ: Քաղաք ու գիւղեր մնած են. ու կենանքի տեղ յօշոտուած և անթաղ դիակներու երկար շարքեր, քանդուած օճախներ, կիսափուլ պատեր, և քանդուածի ու զուլուածի դժոխային տեսարաններ, հազիւ կրնան աղօտ ապացոյցը ըլլալ անոնց երէկի կենսաւէտ գոյութեան: Ոչ ոք կրնա երևակայել, թէ անցեալին մէջ կրած այնքան զրկանքներ, տառապանքներ, թափուած այնքան արիւններ մոռնալու տրամադիր Հայութեան հանդէպ, Սահմանադրական բժշկութիւն մը օրով, Կեդր. կառավարութեան, Ատա. նայի կուսակալութեան և խաւամ խուժանին եղբայրացեալներն (.) համակրական ցոյցը այնքան արիւնոտ պիտի ըլլար:

Քաղաքին ու գիւղերուն մէջ հայկական կամ կամ քրիստոնէական ո՛չ մէկ շէնք, ո՛չ մէկ տուն, ո՛չ մէկ եկեղեցի, ո՛չ մէկ վարժարան. ամէնքն ալ մոխիրի վերա-

ծնած են: Եկեղեցիները պղծուած, սեղանները, խաչերը խորտակուած, Ս. ա. նօթները թալլուած, ամեն սրբութիւն ու նախիրուած, ու հիմա այդ համատարած մոխիրներուն, գերեզմանազուրկ բիւրաւոր դիակներուն նեխումներուն վրայ մինարէները միայն կը ցցուին, Հայութեան ուսին կապուած զարհուրելի խաչերու պէս....:

Այս պահուս, երբ Պէլէտիէի սալակներով Սիհան և Ճիհան գետերը թափուած հայերուն անձնաւաշուած դիակները կը լողան ծովերուն երեսը, անդին Ատա. նայի մէջ ու լեռներուն անկիւնը տունէ, տեղէ, հարստութիւնէ, սիրելիներէ զըրկուած 25-30,000 հայ որբեր ու այրիներ մերկ ու պատառ մը հացի կարօտ, սովաստանջ մեռնելու դժբախտ հարկին մէջ կը գտնուին: Եւ երբ այս սրտմաշուց տեսարանին հանդէպ, երէկի արիւնաբորու ու ճրագործները, իրենց լիւր յաղթականի արիւնոտ գլխարկները կը տօնեն, և երբ բռնատանջուած Արդարութիւնը ինքզինքը անկարող կը զգայ ցոյց տալու ոճիրի հեղինակներուն հանդէպ, սուրէն, գնդակէն, խաչուէն հազիւ ազատած, կիսամոռ ժողովրդին զաւակները աղիողորմ հիշերով, հաճ, օգնութիւն կ'աղաղակեն:

Ասոնց հոգեվարքային հառաչանքոտ աղաղակները ձեզի ուղղուած են ո՛վ Հայեր: Օգնութիւն... բոլոր այն մահամերձ վիրաւորներուն, որոնց խոցոտուած հոգին ու մարմինը կը կոտորայ վէրքերու շարաւին, անոր մահացուցիչ խմորումին տակ: Օգնութիւն... բոլոր այրիներուն, որոնց կուրծքերուն վրայ գեռ չէ չորացած իրենց ձուկներուն վրայ խողխողած զաւակներուն և էրիկներուն արիւնը:

Օգնութիւն... դեռաւոր կոյսերուն և նորապսակ հարսերուն, որոնց իրենց լլկուած ու մերկ մարմիններուն ամօթը ծածկելու կտոր մը կտաւ չունին, և տառապանքը իրենց խոշտանգուած մարմին վրայ, Նեսուսի պատմուածանին պէս կը զգան:

Օգնութիւն... բոլոր վաստակաբեկ և արիւն արցունքը աչքերնուն խորը քաղացած ձեռուներնուն, որոնց իրենց ան-

Ա.Զ.Գ. — Խմբագրութեան ուղղելով Տ. Մուշեղ սրբաւորի կողմ, զնոյն կ'արտասպանեն և մեր ազնիւ Ընթերցողները ի զմութիւն կը հրաժարեն սրբիւն, այրիներու և սովաստանջ Կիլիկիոյ համար:

թաղ զաւակներուն յօշոտած դիակներուն շուրջ բուերու պէս կը թեւածեն, իբրեւ անունդ անոնց նեխումի բոյրը ծծելով:

(զնութիւն... բոլոր որբերուն և որբուհիներուն, որոնք տառապանքը սնունդի տեղ կը խմեն, և աւերակները, մոխիրնեւրը իրենց արցունքով կը թրջին, մահուան ու արիւնի բաժակը մինչև մրուրը քամած:

(զնութիւն... անհայր—անմայր մանկիկներու, որոնց անունը մատակարարող ստինքները չորցած, ու կատաղօրէն փրցուած են թուրը մոլեռանգներու ձեռքով:

(զնութիւն... բոլոր անոնց, որոնց աղէտըին աւաղորութիւնը, տառապանքին հեղձամղձուկ հառաչանքը, չարչարանքին ու սովալլկութեան աղեխարշ աղաղակը արիւնոտ հրաւերն է օժանդակութեան:

Այդ արիւնով ու արցունքով շաղուած հրաւերը ձեզ ուղղուած է, ով Հայութիւն, վաղը արդէն իսկ ուշ է. ձեր ամենադոյզն անտարբերութիւնը, գերեզմաններով պիտի փակէ արիւնազանգ դրուազը այն մեծ իշխոհին, զոր թուրը մոլեռանդութիւնը վերաստեղծեց կիլիկիոյ սրտին մէջ, և որ իր հրէշութիւններովը պատմութեան բոլոր ոճիրները կը գերազանցէ:

(զնութիւն... խոշտանգուած, խաչուած, կենդանւոյն այրուած, մահուան տանջանքին ու չարչարանքին բոլոր վայրագ տեսակներու փորձը իր վրայ կրած, մարտիրոսացած ժողովուրդի մը մնացորդ զաւակներուն, անժառանգներուն, որբերուն, այրիներուն, որոնց անունով ու ձայնով կոչում կընենք Ձեզի, անոնց ցաւը իմ կուրծքիս տակ ու անոնց արիւնոտ արցունքը աչքերուս խորը:

(զնութիւն, օգնութիւն, օգնութիւն... եթէ չէք ուզեր որ իսպառ բնաջնջուի կիլիկիան:

Աղօթարար

ՎԵՏԱԿԻՐ ԱՌԱՋԸ. ՀԱՅՈՑ ԱՍՏԱՅԻ

ՄՈՒՇԵՂ ԵՊՍ.

25/8 Մայիս, Գաթիք

ՄԱՆՈՒՅ. — Նվաստները կրնան զրկուիլ կամ Ազգ. Պատրիարքարանի և կամ Գանձերի Հ. Բ. Ը. Միութեան Նախագահ վսեմ. Պօղոս փառաշուքի անունով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՄԱՐԱՆ

- Հ. Յ. Աստուրիան. — Արարական արձանադրութիւնները Հայաստանէն. 241
Հ. Հեռով Ալիշան. — Օրագիր առժամայն ազգ. մանց մտաց և սրտի 1842. 246
Արշունկեց. — Բաց համակ. 254
Զիթումի. — Վանքուսակ՝ Ախպէրանց արուն. 256
***. — Հայոց Պատմութիւնը ըստ Տաղիտոսի. 261

ԳՐԱԿԱՆՔ

- Վիրգիլիոսի «Եմէակամ»-ն. — Պատմ. Տրոյի յոր կործանման. թարգմ. Հ. Ա. Ղազկիսան. . 258
Լէոքարտի. — Աւետար (Թարգ. Նոյն). 262
Քիտուամ. — Նոր պատրանքներ. 262
Մկրտիչ Ռաֆայէլեան. — Ի ազալի փաղաւ. մտիկ մահ. թերգանի. 263

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

- Ղաւմատուր. — Փարպեցւոյ թուղթին վաւերաւ. կատութիւնը. 248
Հ. Ղ. Տայիան. — «Հովազական Սրբեղ» 278
Բ*. Յ. Յ. — Ե. Թովհէնի Նիքիտասար թիւրքիւն և Հայեր. 279
***. — Խաչեր. — Իմամաթ. — Կրօնների պատմ. 280

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՈՒՆ

- Հ. Ղ. Յ. — «Գրիգորանտես» 288
***. — Տրագիգոնի Նոր Թերթը՝ Խարիխ. 284

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

- Ռ. Յ. Փ. — Ի մահ Պօղոսի Միւսեման. 284
Մուշեղ եպս. — Կոչ արառասանների և առ. բողջ Հայութեան արիւնազանց կիլիկիայի համար. 287
Հ. Նիքիտէն Տ. — Իմաստներ. 281, 286

Ա.Զ.Գ. — Նիւթերուն բազմութեան առթիւ յետաձգուեցաւ ողբալ ցեալ վանքեանի կենսագիրը իր կենդանազրով. Յոռն իսի մէջ «Քաղմալէպ» իր ազնիւ ընթերցողներուն պիտի ներկայացնէ վանայ Որբուհիները իրենց անձ. նուէր Գաթիարակներովը: